ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ

(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Գիտական խմբագիր՝

Առաքելյան Ս.Վ. – *իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր*

Հեղինակ՝

Իսրայելյան Գ.Վ. – *իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, Արդարադատության ակադեմիայի ռեկտորի խորհրդական, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս*

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 67.410
Ի 830

Երաշխավորվել է հրատարակության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի կողմից

Ի 830 **Դատական ակտերի հարկադիր կատարմանն առնչվող հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործնական մեկնաբանություններ): Գ.Վ.Իսրայելյան: – Եր.: Արդարադատության ակադեմիա, 2022. – 36 էջ:**

Աշխատությունում գիտագործնական վերլուծության են ենթարկվել ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսված՝ դատական ակտերի հարկադիր կատարմանն առնչվող հանցագործությունների որակման առանձնահատկությունները և մեկնաբանվել են հանցավոր այդ արարքները նախատեսող բոլոր հոդվածները:

Հրատարակությունը կարող է օգտակար լինել իրավակիրառողների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և դատական ակտերի հարկադիր կատարման քրեաիրավական հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ISBN 978-9939-0-4141-4

ՀՏԴ 343.1
ԳՄԴ 67.410

© Իսրայելյան Գ.Վ., 2022
© Արդարադատության ակադեմիա, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

§1. ԴԱՏԱՎՈՐԻ, ԴԱՏԱԽԱԶԻ, ՔՆՆԻՉԻ, ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ, ՓԱՍՏԱԲԱՆԻ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ, ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿԱՄ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼԸ ԿԱՄ ՆՐԱՆՑ ԳՈՒՅՔԸ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՎՆԱՍԵԼԸ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ..... 6

§2. ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԿԱՄ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ 18

§3. ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊՕՐԻՆԻ ԱՐԱՐՔ ԿԱՏԱՐԵԼԸ..... 24

§4. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՉՄԻ, ՔԱՆԱԿԻ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ, ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐ ԹԱՔՑՆԵԼԸ ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ԿԵՂԾ ՏՎՅԱԼՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ.....30

ՆԱԽԱԲԱՆ

Գործնականում երբեմն դատական ակտերը չեն կատարվում, խոչընդոտներ են ստեղծվում դրանց կատարման համար, կատարվում են այլ արարքներ, որոնք ոտնձգում են դատական ակտերի՝ նորմատիվ ակտերով սահմանված կատարման կարգի, իրավակիրառող մարմինների՝ դատարանի, քննչական կամ վարչական մարմինների, Հարկադիր կատարման ծառայության նորմալ գործունեության, նշված մարմիններում օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց, նրանց մերձավոր ազգականների, մերձավորների կամ դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող անձանց իրավունքների և ազատությունների դեմ:

Իհարկե, այդ արարքները նորույթ չեն: Դրանց համար քրեական պատասխանատվություն նախատեսվում էր նաև նախկինում: Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 45-րդ գլխում (Արդարադատության շահերի դեմ ուղղված հանցագործությունները), սակայն վերը նշված արարքների առանձին հատկանիշներ ներկայացված են նորովի: Ուստի անհրաժեշտություն է առաջացել մեկնաբանել այդ կարգավորումները:

Վերը նշվածից ելնելով՝ սույն աշխատությունում ներկայացված է քննարկվող բնագավառում քրեական պատասխանատվություն առաջացնող արարքների բնորոշումը և դրանց մեկնաբանումը՝ ըստ Օրենսգրքի կարգավորումների:

Հուսով ենք՝ իրավակիրառողի համար այս հրատարակությունն ուղեցույց կհանդիսանա վերը հիշատակված արարքներին իրավաբանական ճիշտ գնահատական տալու կարևոր և բարդ գործում:

Սերգեյ Առաքելյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր

§1. ԴԱՏԱՎՈՐԻ, ԴԱՏԱԽԱԶԻ, ՔՆՆԻՉԻ, ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ, ՓԱՍՏԱԲԱՆԻ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ, ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿԱՄ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼԸ ԿԱՄ ՆՐԱՆՑ ԳՈՒՅՔԸ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՎՆԱՍԵԼԸ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

Հոդված 490. Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի նկատմամբ սպառնալիքը կամ նրանց մասին տեղեկություն հրապարակելը կամ նրանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելը

1. Դատավորի, դատախազի, քննիչի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի, փաստաբանի, ներկայացուցչի, փորձագետի կամ հարկադիր կատարողի կամ նշված անձանց մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ բացառապես դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկավար, հետաքննության մարմին, փաստաբան, ներկայացուցիչ, փորձագետ կամ հարկադիր կատարող կամ նշված անձանց մերձավոր ազգական կամ մերձավոր կամ

նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ՝

պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելը կամ նշված անձանց գույքը ոչնչացնելը կամ վնասելը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության հետ՝

պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ 1-3 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ 1-2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ 2-5 տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նկատմամբ բռնություն գործադրելը՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության հետ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ 4-8 տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ 5-10 տարի ժամկետով:

5. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ

3) մարդու առողջությանը ծանր վնաս պատճառելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ 6-12 տարի ժամկետով:

Օրենսգրքի 490-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայի ձևակերպումից բխում է, որ քննարկվող հանցագործությունից **տուժող** կարող են լինել դատավորը, դատախազը, քննիչը, քննչական մարմնի ղեկավարը, հետաքննության մարմինը, փաստաբանը, ներկայացուցիչը, փորձագետը կամ հարկադիր կատարողը կամ նշված անձանց մերձավոր ազգականը կամ մերձավորը կամ դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող անձը:

«Մերձավոր ազգական» և «մերձավոր» հասկացությունները բացահայտվում են Օրենսգրքի 3-րդ հոդվածում: Մասնավորապես, նշված հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ ***մերձավոր ազգականը***, անկախ համատեղ բնակության հանգամանքից, ամուսինն է, նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեզավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը

կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը: Ընդ որում, ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

Ըստ նույն հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի՝ ***մերձավոր է*** համարվում յուրաքանչյուր ոք, որի կյանքը, առողջությունը, շահերը կամ բարեկեցությունը կարևոր են անձի համար՝ պայմանավորված այդ անձի հետ ունեցած անձնական հարաբերություններով:

Հոդված 490-ում նշված անձանց ***դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող անձ*** կարող է հանդիսանալ, օրինակ՝ հարևանի որդին, հոգեզավակը (սանիկը), ում տվյալ պահին խնամում է անձը կամ ով գտնվում է նրա հսկողության ներքո, և այլք:

Քննարկվող հանցագործությունն **օբյեկտիվ կողմից** բնութագրվում է ***գործողությամբ***, այն է՝ նշված անձանց արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու ***սպառնալիքով:***

Սպառնալիքը վերը թվարկված անձանց արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու կամ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու՝ բանավոր կամ գրավոր ձևով արտահայտված մտադրությունն է: Այն կարող է տրվել ինչպես հրապարակայնորեն, այնպես էլ երրորդ անձանց բացակայության պայմաններում՝ անձամբ կամ միջնորդի օգնությամբ, իր կամ ուրիշի, որոշակի խմբի անունից:

Այսպիսով, քննարկվող հանցակազմը ձևավորում են սպառնալիքի հետևյալ տեսակները.

1. Վերը թվարկված անձանց արատավորող կամ նրանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություն հրապարակելու սպառնալիքը: Որպես այդպիսին կարող է հանդես գալ այդ անձանց բարոյականության և իրավունքի տեսակետից բացասաբար բնութագրող տեղեկություն հրապարակելու սպառնալիքը: Նշված տեղեկությունը կարող է համապատասխանել իրականությանը կամ հանդիսանալ զրպարտություն:

2. Նշված անձանց նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքը: Որպես այդպիսին հասկացվում է այլ մարդու նկատմամբ, նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելու կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելու սպառնալիքը:

3. Նշված անձանց գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը: Տվյալ պարագայում խոսքը գույքը լրիվ կամ մասնակի անպիտան վիճակի հասցնելու սպառնալիքի մասին է:

Այն սպառնալիքը, որի մասին վերը թվարկված անձինք տեղյակ չեն եղել (արտահայտվելով այլոց ներկայությամբ՝ անձը նպատակ չունի նրանց որևէ ձևով այդ սպառնալիքի մասին տեղեկացնելու), կարող է համարվել զուտ դիտավորության բացահայտում, ինչը քրեական պատասխանատվություն չի առաջացնում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սպառնալիքը ***պետք է կապված լինի*** նշված անձանց ***օրինական*** ծառայողական կամ մասնագիտական գործունեության կամ ***բացառապես*** դատավոր, դատախազ, քննիչ, քննչական մարմնի ղեկա-

վար, հետաքննության մարմին, փաստաբան, ներկայացուցիչ, փորձագետ կամ հարկադիր կատարող կամ նշված անձանց մերձավոր ազգական կամ մերձավոր կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվող լինելու հանգամանքի հետ:

Ծառայողական գործունեությունը որոշակի ոլորտում (օրինակ՝ հարկադիր կատարման) ծառայության հետ կապված գործառույթների իրականացումն է, իսկ ***մասնագիտական գործունեությունը*** սոցիալական նշանակության գործունեություն է, որի իրականացումը պահանջում է հատուկ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ (օրինակ՝ դատավորի գործունեությունը): Ընդ որում, թե՛ ծառայողական և թե՛ մասնագիտական գործունեությունը պետք է լինեն օրինական՝ հենվեն օրենսդրության պահանջներին, անձինք զբաղեցնեն համապատասխան պաշտոն:

Ի տարբերություն սպառնալիքի այլ դեպքերի (ինչպես, օրինակ՝ Օրենսգրքի հոդված 308-ով նախատեսված ահաբեկչության պարագայում՝ պայթյունի, հրկիզման կամ այլ հանրավտանգ արարք կատարելու իրական սպառնալիքը), քննարկվող հանցակազմի իմաստով սպառնալիքի իրական լինելը պարտադիր չէ, բավական է հավաստել միայն սպառնալու փաստը: Վերը թվարկված անձանց նկատմամբ ցանկացած սպառնալիք անթույլատրելի է, քանզի դա հեղինակազրկում է իշխանությունը, սպառնում արդարադատության նորմալ իրականացմանը:

Քննարկվող հանցանքը նախատեսված է ձևական հանցակազմով՝ ***ավարտված է*** համարվում, բանավոր սպառնալիքի դեպքում՝ այն տալու, իսկ գրավորի դեպքում՝ տուժողի կողմից ստանալու պահից:

Հոդված 490-ով նախատեսված հանցագործության **սուբ-յեկտն** ընդհանուր է՝ 16 տարին լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ:

Սուբյեկտիվ կողմից արարքը կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Օրինակ՝ երբ անձը հարկադիր կատարողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիք է հնչեցնում, որպեսզի վերջինս դադարեցնի կատարողական վարույթը, առկա է ուղղակի դիտավորություն, քանի որ անձը գիտակցում է իր արարքի՝ տվյալ հանցակազմի հատկանիշ հանդիսացող փաստական հանգամանքները, և այդ արարքի կատարումը նրա նպատակին հասնելու միջոց է: Առանց մատնանշված նպատակի արարքի կատարումը (պարզապես սպառնալիք հնչեցնելը) կդիտվի որպես անուղղակի դիտավորությամբ իրականացված:

Օրենսգրքի **490-րդ հոդվածի 2-րդ մասը** պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող ***տեղեկություն հրապարակելու*** կամ նշված անձանց ***գույքը ոչնչացնելու կամ վնասելու*** համար՝ կապված նրանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության հետ:

Օրենսգրքի **490-րդ հոդվածի 3-րդ մասը** պատասխանատվություն է նախատեսում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նկատմամբ ***բռնություն գործադրելու*** համար՝ կապված նրանց օրինական ծառայողական կամ մասնագիտական գործունեության հետ: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում ***բռնությունը***, ինչպես վերը նշվեց, բնորոշվում է որպես այլ մարդու նկատմամբ նրա

կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտավորյալ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը: Քանի որ տվյալ դեպքում խոսքը ֆիզիկական վնաս պատճառելու մասին է, ուստի առաջանում է դրան իրավաբանական գնահատական տալու հարց: Առողջությանը թեթև և միջին ծանրության վնաս պատճառելու դեպքում արարքը որակվում է 490-րդ հոդվածի 3-րդ մասով: Առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում որակման հարցը կքննարկվի ստորև:

Օրենսգրքի **490-րդ հոդվածի 4-րդ մասը** պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է ***մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ*** կատարված, եթե հանցագործությանը մասնակցել են այնպիսի համակատարողներ, որոնք նախքան հանցանքն սկսելը պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին:

Հանցանքն ***իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը***, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն, նշանակում է ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները

կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելը:

Օրենսգրքի **490-րդ հոդվածի 5-րդ մասը** պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ կամ 4-րդ մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ

3) մարդու առողջությանը ծանր վնաս պատճառելով:

Օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է ***հանցավոր կազմակերպության կողմից*** կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավելի անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը:

«Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ ***զենքը*** իրենց կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու կամ ազդանշան արձակելու համար նախատեսված սարքերը և առարկաներն են: Տվյալ պարագայում զենք պետք է համարել հրազենը (վառոդի կամ այլ լիցքի էներգիայի հաշվին՝ նպատակաուղղված շարժում ստացած գնդակի միջոցով տա-

ռածության վրա գտնվող նշանակետի մեխանիկական խոցման համար նախատեսված զենք, որի հիմնական բաղկացուցիչ մասերն են՝ փողը, փակաղակը, թմբուկը, իրանը, փողի պահպանակը, սառը զենքը՝ մարդու մկանային ուժի օգնությամբ, օբյեկտի հետ անմիջական շփման ժամանակ այն խոցելու համար նախատեսված զենքը), ինչպես նաև օրենքով նախատեսված այլ զինատեսակները:

Արարքի որակման համար զենքի գործարանային արտադրության կամ ինքնաշեն լինելու հանգամանքը նշանակություն չունի: Նշանակություն չունի նաև զենքի կրման օրինականությունը, այն տարբերությամբ, որ ապօրինի կրելու պարագայում առկա կլինի հանցագործությունների համակցություն (կորակվի նաև Օրենսգրքի հոդված 334-ով՝ ապօրինի կերպով քաղաքացիական ողորկափող հրազեն, գազային, օդաճնշիչ, սառը կամ նետողական զենք կրելը կամ հոդված 335-ով՝ հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի և այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը):

Որպես մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկաներին կամ միջոցներին դասվում են կենցաղային կամ արտաքին աշխարհի առարկաները, որոնք անձն օգտագործում է հանցանքի կատարման համար (փայտի կտոր, երկաթե ձող և այլն): ***Նախապես պատրաստված է*** համարվում այն առարկան կամ միջոցը, որը մինչև հանցանքի կատարումը ստեղծվում է հանցավորի կողմից, օրինակ՝ ինքնաշեն դանակ: ***Նախապես հարմարեցված է*** այն առարկան կամ միջոցը, որը նախապես չի պատրաստվել հանցանք կատարելու համար,

այլ հարմար է դարձվել այդ նպատակին, օրինակ՝ հանցավորը սրել է երկաթե ձողը:

Զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի ***գործադրմամբ կատարելը*** ենթադրում է նպատակային նշանակությամբ դրա փաստացի օգտագործելը:

Առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում արարքը որակվում է միայն Օրենսգրքի 490-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով: Օրենսգրքի 166-րդ հոդվածի կարգավորումների տեսանկյունից ***առողջությանը ծանր վնաս պատճառելը*** մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելն է, որը՝ 1) վտանգավոր է կյանքի համար, 2) առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ դրա գործառույթի կորուստ, 3) արտահայտվել է դեմքի, գլխի, ականջի կամ կզակի անջնջելի այլանդակմամբ, 4) առաջացրել է առողջության քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով 5) առաջացրել է հղիության ընդհատում կամ 6) առաջացրել է հոգեկան խանգարում, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում:

Քննարկվող հանցակազմի վերաբերյալ քրեական նոր օրենսգրքի կարգավորումներից նախկին իրավակարգավորումները տարբերվում են հետևյալով.

– Նախկին օրենսգրքի 347-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն էր սահմանում դատավորի կամ նրա մերձավորի նկատմամբ սպանության, առողջությանը վնաս պատճառելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու

սպառնալիքի համար՝ կապված գործը կամ նյութերը դատարանում քննելու հետ, 2-րդ մասը՝ նույն արարքի համար, որը կատարվել է դատախազի, քննիչի, հետաքննություն կատարող անձի, պաշտպանի, փորձագետի կամ դատական ակտերի հարկադիր կատարողի կամ նրանց մերձավորի նկատմամբ՝ կապված նախնական քննություն վարելու, գործը կամ նյութերը դատարանում քննելու կամ դատարանի դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը կատարելու հետ, 3-րդ մասը՝ նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով, իսկ 4-րդ մասը՝ նույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքի համար, որը զուգորդվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով:

- Նախկին օրենսգրքի 344-րդ հոդվածը պատասխանատվություն էր նախատեսում դատավորին, դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին, դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելու համար: Օրենսգրքում նման առանձին արարք նախատեսված չէ, քանի որ, ինչպես վերը նշվեց, թվարկված անձանց արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկությունը կարող է կրել նաև զրպարտչական բնույթ, ուստի պատասխանատվություն է առաջացնում Օրենսգրքի 490-րդ հոդվածով:

§2. ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԿԱՄ ԴՐԱ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ

Հոդված 507. Դատական ակտը չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը

1. Օրինական ուժի մեջ մտած դատավճռի, վճռի կամ դատական այլ ակտի կատարմանը խոչընդոտելը, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դրանով սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ այն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կամ տվյալ ակտի կատարման շրջանակներում հարկադիր կատարողի սահմանած ժամկետում պարտապանի կամ նրա իրավասու անձի կողմից չկատարելը, եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների գործադրմամբ, կամ տվյալ ակտով արգելված գործողություն կատարելն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 10-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը 100 ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 1 տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 20-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ 80-150 ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առա-

վելագույնը 2 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով:

Քննարկվող հանցանքը, նախ, խախտում է դատական ակտերի պարտադիր կատարման սկզբունքը: Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար: Բացի այդ, այն վնաս է պատճառում ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերին, որոնց օգտին համապատասխան ակտերը կայացվել են:

Օրենսգրքի հոդված 507-ով նախատեսված հանցակազմի ձևակերպումից բխում է, որ քրեական պատասխանատվության հարց կարող է առաջանալ ***միայն քրեական, քաղաքացիական և վարչական գործն ըստ էության լուծող դատական ակտը*** չկատարելու կամ դրա կատարմանը խոչընդոտելու համար: Հետևաբար՝ քննարկվող հանցակազմն առկա չէ դատական այն ակտերը չկատարելու կամ դրանց կատարումը խոչընդոտելու դեպքերում, որոնք գործն ըստ էության լուծելու համար նշանակություն չունեն (օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումներին համապատասխան, վկային բերման ենթարկելու մասին որոշումը), քանի որ տվյալ պարագայում արդարադատության իրականացումը չի խախտվում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ հանցակազմն առկա է, եթե եզրափակիչ դատական ակտն ***արդեն մտել է օրինական ուժի մեջ:***

Օբյեկտիվ կողմից հանցանքը դրսևորվում է հետևյալ արարքներով.

1. Դատական ակտի կատարմանը խոչընդոտելը.

Այս արարքը դրսևորվում է ակտիվ վարքով՝ ***գործողությամբ:*** Հանցավորի գործողություններն ուղղված են դատական ակտերի կատարմանը խանգարելուն: Օրինակ՝ դատական ակտով սահմանված սերվիտուտի իրավունքից օգտվելուն խանգարելը՝ ճանապարհ փակելով, փակված ճանապարհը չբացելով կամ այլ խոչընդոտներ ստեղծելով:

2. Դատական ակտը դրանով սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ այն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կամ տվյալ ակտի կատարման շրջանակներում հարկադիր կատարողի սահմանած ժամկետում չկատարելը.

Տվյալ դեպքում արարքը դրսևորվում է ***անգործությամբ***, այսինքն՝ սահմանված ժամկետում չի կատարում եզրափակիչ դատական ակտով սահմանված պարտականությունը, ընդ որում՝ եթե դրա կատարումը հնարավոր չէ հարկադիր կատարման միջոցների[1] գործադրմամբ: Օրինակ՝ դատական ակտով սահմանված հողամասն ազատելու և այն ազատ վիճակում սեփականատիրոջը վերադարձնելու պարտավորությունը չկատարելը:

---

[1] «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը հարկադիր կատարման միջոցներին դասում է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը, այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը և այլն:

3. Դատական ակտով արգելված գործողություն կատարելն այդ արգելքի գործողության ժամանակահատվածում.

Ինչպես ձևակերպումից ուղղակիորեն հետևում է, այս արարքը դրսևորվում է գործողությամբ՝ հանցավորը համապատասխան ժամկետում կատարում է արգելված գործողությունը: Օրինակ՝ երբ դատական ակտով արգելվել է վաճառել գույքը, մինչև այլ անձի կողմից դրա նկատմամբ ժառանգություն ընդունելը, կամ դատական ակտով արգելվել է քանդել ինքնակամ շինությունը, մինչև դրա օրինականացման վերաբերյալ դիմում ներկայացնելը, իսկ հանցավորը խախտում է այդ արգելքը:

Բացի այդ, վերը նշված 2-րդ և 3-րդ արարքները կատարելու պարագայում, փաստորեն, հանցակազմի պարտադիր հատկանիշ է հանցանքի կատարման ժամանակը:

Ինչպես ուղղակիորեն նշված է հիմնական հանցակազմում, քննարկվող հանցագործության **սուբյեկտ են** պարտապանը կամ նրա իրավասու անձը:

Սուբյեկտիվ կողմից հանցանքը դրսևորվում է ***ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի*** դիտավորությամբ: Օրինակ՝ երբ պարտապանը չի ազատում հողամասը, որպեսզի հասցնի հավաքել և իր կարիքների համար օգտագործել բերքը, առկա է ուղղակի դիտավորություն, քանի որ հողամասը չազատելը նպատակին հասնելու միջոց է: Իսկ եթե պարտապանը, առանց որևէ նպատակի, չի ազատում հողամասը, առկա է անուղղակի դիտավորություն:

Քննարկվող **հոդվածի 2-րդ մասը** պատասխանատվություն է սահմանում նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի համար, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Այս հանգամանքն արդեն պարզաբանվել է նախորդ հանցագործությունը քննարկելիս:

Քննարկվող հանցագործության պարագայում նույնպես առկա են Օրենսգրքի և նախկին քրեական օրենսգրքի կարգավորումների որոշակի տարբերություններ:

Մասնավորապես, նախկին քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածը՝ դատական ակտը դիտավորությամբ չկատարելը, բաղկացած էր 3 մասերից: ***1-ին մասը*** պատասխանատվություն էր սահմանում օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելու, ***2-րդ մասը՝*** օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) դատական ակտում սահմանված ժամկետում կամ ժամկետ սահմանված չլինելու դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելու, իսկ ***3-րդ մասը՝*** օրինական ուժի մեջ մտած դատական ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) քաղաքացու կողմից չկատարելու համար՝ նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Փաստորեն, նախկին քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի բաժանումը մասերի պայմանավորված էր սուբյեկտների դասակարգմամբ, իսկ 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում պատասխանատվություն չէր առաջանում գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների վերաբերյալ դատական ակտերը չկատարելու պարագայում: Բացի այդ, 3-րդ մասով քրեական պատասխանատվություն էր առաջանում, եթե քննարկվող արարքը կատարվում էր նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասը, ինչպես վերը նշվեց, նախատեսում է 1-ին մասով նախատեսված արարքի որակյալ տեսակը, այսինքն՝ առկա է ծանրացնող հանգամանք: Հոդվածը որևէ բացառություն չի սահմանում, մասնավորապես՝ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների վերաբերյալ, հետևաբար այդ հարցերը լուծող օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերը չկատարելը կամ դրանց կատարումը խոչընդոտելը ևս առաջացնում է քրեական պատասխանատվություն:

Ինչ վերաբերում է նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում կատարելու դեպքում քրեական պատասխանատվություն առաջանալու հարցին, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206.[9] հոդվածը 09.06.2022թ. ուժը կորցրել է: Այլ կերպ ասած՝ դատական ակտը չկատարելը կամ դրա կատարումը խոչընդոտելը ներկայումս առաջացնում է միայն քրեական պատասխանատվություն:

§3. ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՊՕՐԻՆԻ ԱՐԱՐՔ ԿԱՏԱՐԵԼԸ

Հոդված 509. Արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ ապօրինի արարքը

1. Քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով դրանց վարույթի ցանկացած փուլում արգելանքի տակ վերցված գույքի նկատմամբ ապօրինի արարքը, որը դրսևորվել է՝

1) գույքի մեկուսացվածությունը կամ նույնականացումն ապահովող և իրավասու անձի կողմից դրված կնիքը կամ կողպեքը ոչնչացնելով, վնասելով կամ այլ կերպ չեզոքացնելով,

2) գույքը յուրացնելով, օտարելով, թաքցնելով, ոչնչացնելով, վնասելով, փոխելով, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելով, այլ կերպ տնօրինելով կամ ապօրինի օգտագործելով այն անձի կողմից, որին այդ գույքը պաշտոնապես վստահված է եղել, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի կողմից, եթե նրանք տեղյակ են եղել գույքի արգելանքի մասին,

3) գույքի պահպանման պարտականությունը չկատարելով այն անձի կողմից, որի վրա դրված է եղել նման պարտականություն,

4) վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով բանկային գործառնություններ իրականացնելով կամ

5) գույքի բռնագրավման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից այլ ապօրինի եղանակով խուսափելով՝

պատժվում է տուգանքով՝ 10-ապատիկից 30-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ 100-200 ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ 2-5 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը 3 տարի ժամկետով:

Քննարկվող հանցագործության **առարկան** արգելանքի վերցված գույքն է: Հոդվածի դիսպոզիցիայից բխում է, որ գույքը կարող է արգելանքի վերցվել ինչպես դատական կարգով՝ քաղաքացիական կամ վարչական գործով, այնպես էլ վարչական կարգով՝ վարչական վարույթում կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով դրանց վարույթի ցանկացած փուլում:

Օբյեկտիվ կողմից տվյալ հանցանքը դրսևորվում է նշված գույքի նկատմամբ գործողությամբ կամ անգործությամբ ապօրինի արարք կատարելով: ***Ապօրինին*** նշանակում է, որ արարքը կատարվել է առանց իրավական հիմքի:

Քննարկվող հոդվածում թվարկվում են նաև արարքի կատարման եղանակները.

1) Գույքի մեկուսացվածությունը կամ նույնականացումն ապահովող և իրավասու անձի կողմից դրված կնիքը կամ կողպեքը ոչնչացնելով, վնասելով կամ այլ կերպ չեզոքացնելով:

«Ոչնչացնել» և «վնասել» հասկացությունները վերը պարզաբանվել են:

Այլ կերպ չեզոքացնելու օրինակ կարող է հանդիսանալ՝ առանց վնասելու կողպեքը բացելը:

2) Գույքը յուրացնելով, օտարելով, թաքցնելով, ոչնչացնելով, վնասելով, փոխելով, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելով, այլ կերպ տնօրինելով կամ ապօրինի օգտագործելով այն անձի կողմից, որին այդ գույքը պաշտոնապես վստահված է եղել, ինչպես նաև գույքի սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի կողմից, եթե նրանք տեղյակ են եղել գույքի արգելանքի մասին:

Յուրացնելը ենթադրում է իրեն վստահված գույքի նկատմամբ լիազորություններն օգտագործելով ուրիշի գույքն ապօրինի, անհատույց իրենը կամ ուրիշինը դարձնելը:

Օտարելը նշանակում է վաճառել, փոխանակել, գրավ դնել, նվիրել:

Թաքցնելը նշանակում է առանց համապատասխան մարմնի թույլտվության գույքը տեղափոխել այլ վայր կամ ի պահ տալ այլ անձանց:

Փոխելը նշանակում է այլ գույքով փոխարինել:

Ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելը նշանակում է առանց համապատասխան մարմնի թույլտվության անօրինական, առանց գույքը թաքցնելու մտադրության այն ի պահ տալ:

Այլ կերպ տնօրինելը, օրինակ՝ իր սեփական արտադրության մեջ օգտագործելն է:

Ապօրինի օգտագործելը, օրինակ՝ հողամասի բերքը հավաքելն է:

Ընդ որում, քննարկվող հանցագործության երկրորդ խումբը կազմող եղանակներով դրսևորումների պարագայում ***սուբյեկտը հատուկ է՝*** այն անձը, որին այդ գույքը պաշտոնապես վստահված է եղել, ինչպես նաև գույքի սեփականա-

տերը կամ այլ տիրապետողը, եթե նրանք տեղյակ են եղել գույքի արգելանքի մասին:

3) Գույքի պահպանման պարտականությունը չկատարելով այն անձի կողմից, որի վրա դրված է եղել նման պարտականություն:

Տվյալ եղանակը նշանակում է՝ իրեն ի պահ հանձնված գույքի պահպանության կատարման հարցում անգործության դրսևորում: Օրինակ՝ երբ համապատասխան անձը գույքն անփոփոխ պահելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկում:

Այս պարագայում ևս հանցագործության ***սուբյեկտը հատուկ է՝*** այն անձը, որի վրա դրված է եղել գույքի պահպանման պարտականություն:

4) Վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով բանկային գործառնություններ իրականացնելով:

Այս եղանակով կատարվող հանցանքը կարող է դրսևորվել, օրինակ՝ կալանքի տակ գտնվող գույքը որպես վարկ տալով: Ընդ որում, տվյալ պարագայում ևս հանցագործության ***սուբյեկտը հատուկ է՝*** վարկատու կազմակերպության ծառայողը:

5) Գույքի բռնագրավման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից այլ ապօրինի եղանակով խուսափելով:

Տվյալ արարքը կարող է դրսևորվել, օրինակ՝ հարկադիր կատարողին գույքի ոչնչացման կամ կորստի մասին սուտ տեղեկություններ հաղորդելով, գույքը նրան հանձնելուց հրաժարվելով և այլն:

Սուբյեկտիվ կողմից Օրենսգրքի 509-րդ հոդվածով նախատեսված արարքը կարող է դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: ***Ուղղակի դիտա-***

վորությունն առկա է այն դեպքում, երբ, օրինակ, գույքի սեփականատերը հրաժարվում է գույքը հանձնել հարկադիր կատարողին, որպեսզի խուսափի գույքի բռնագրավման վերաբերյալ դատական ակտը կատարելուց: Իսկ այն դեպքում, երբ, օրինակ, սեփականատերն առանց համապատասխան մարմնի թույլտվության, անօրինական, առանց գույքը թաքցնելու մտադրության այն ի պահ է տալիս, առկա է ***անուղղակի դիտավորություն:***

Օրենսգրքի և նախկին քրեական օրենսգրքի կարգավորումների տարբերությունը հանգում է հետևյալին.

Նախկին օրենսգրքի 345-րդ հոդվածը պատասխանատվություն էր սահմանում ***1-ին մասով՝*** արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու համար այն անձի կողմից, ում այդ գույքը վստահված է եղել, ինչպես նաև վարկատու կազմակերպության ծառայողի կողմից կալանքի տակ գտնվող դրամական միջոցներով (ավանդներով) բանկային գործառնություններ իրականացնելու համար, իսկ ***2-րդ մասը՝*** դատարանի դատավճռով բռնագրավման ենթակա գույքը թաքցնելու կամ յուրացնելու, ինչպես նաև գույքի բռնագրավման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կատարումից այլ ձևով խուսափելու համար:

Ակնհայտ է, որ հանցանքի կատարման եղանակները գրեթե նույնն են: Նախկին կարգավորման մեջ շեշտված է «բռնագրավման ենթակա գույքը», որը բացակայում է գործող կարգավորումներում, ինչը, ըստ էության, ներառվում է «արգելանքի տակ գտնվող գույք» հասկացության մեջ և հատուկ շեշտադրելն իմաստազուրկ է: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի

44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ արգելանքը կիրառվում է պարտապանի գույքը բռնագրավելու մասին դատարանի դատավճիռը կատարելու դեպքում:

§4. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ, ՔԱՆԱԿԻ ԵՎ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ, ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐ ԹԱՔՑՆԵԼԸ ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ԿԵՂԾ ՏՎՅԱԼՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Հոդված 510. Պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը, հայտարարագրում տվյալներ թաքցնելը կամ դրանում կեղծ տվյալներ ներկայացնելը

1. Պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը, երբ հայտարարագիր տալը պարտադիր է, ինչպես նաև հայտարարագրում գույքի, գույքային իրավունքների կազմի, քանակի կամ գտնվելու վայրի մասին տվյալ թաքցնելը կամ կեղծ տվյալ ներկայացնելը, որը հանգեցրել է խոշոր չափերի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը 20-ապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ 80-150 ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, կամ

կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով:

Օբյեկտիվ կողմից քննարկվող հանցանքը դրսևորվում է հետևյալ արարքներով.

1. Սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնելուց խուսափելը, երբ հայտարարագիր տալը պարտադիր է:

Այս արարքը դրսևորվում է **անգործությամբ՝** վերը նշված հայտարարագիրը ներկայացնելուց խուսափելով: Հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը սահմանված է օրենքով: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«Եթե 100 000 դրամ և ավելի բռնագանձման ենթակա գումարով կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը հանձնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, պարտապանը չի կատարում կատարողական թերթի պահանջները, և պարտապանի գույքը բավարար չէ բռնագանձվող գումարը լրիվ մարելու համար, ապա պարտապանը պարտավոր է կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը հանձնելուց հետո՝ 20 օրվա ընթացքում, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների, այդ թվում՝ պահանջի իրավունքի, կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնել հարկադիր կատարողին: Պարտապանը պարտավոր է հայտարարագրում տեղեկություններ ներկայացնել նաև սեփականության իրավունքով իրեն պատկանած, սակայն կատարողական վարույթի հարուցումից հետո օտարված անշարժ

գույքի և տրանսպորտային միջոցների, ինչպես նաև դատական ակտի, ժառանգության վկայագրի կամ այլ իրավահաստատող փաստաթղթի հիման վրա պարտապանի անունով գրանցման կամ հաշվառման ենթակա, սակայն չգրանցված (չհաշվառված) գույքի և գույքային իրավունքների մասին:

Եթե հայտարարագիր ներկայացնելուց հետո պարտապանի գույքի արժեքն անբավարար է կատարողական թերթի պահանջները կատարելու համար, ապա պարտապանի կողմից սեփականության իրավունքով նոր գույք կամ գույքային իրավունք ձեռք բերվելու դեպքում պարտապանը հինգ օրվա ընթացքում հայտարարագիր է ներկայացնում նախորդ հայտարարագիրը ներկայացնելուց հետո սեփականության իրավունքով ձեռք բերված գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին»:

2. Հայտարարագրում գույքի, գույքային իրավունքների կազմի, քանակի կամ գտնվելու վայրի մասին տվյալ թաքցնելը կամ կեղծ տվյալ ներկայացնելը, որը հանգեցրել է խոշոր չափերի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության:

Թաքցնելը տվյալ դեպքում ենթադրում է համապատասխան տեղեկությունը չներկայացնելը:

Կեղծ տվյալ ներկայացնելն իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն տրամադրելն է:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ **խոշոր չափ** է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Քննարկվող հանցագործության **սուբյեկտը** հատուկ է: Ինչպես այդ կապակցությամբ ուղղակիորեն նշվում է հոդվածի դիսպոզիցիայում՝ որպես այդպիսին կարող է հանդես գալ ***պարտապանը:***

Սուբյեկտիվ կողմից հանցանքը դրսևորվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Ուղղակի դիտավորությունն առկա է այն դեպքում, երբ, օրինակ, գույքի քանակի վերաբերյալ պարտապանը կեղծ տվյալ է ներկայացնում՝ նպատակ ունենալով խուսափել խոշոր չափի պարտականության կատարումից: ***Անուղղակի դիտավորությունն*** առկա է այն դեպքում, երբ, օրինակ, պարտապանը չի ցանկանում հայտարարագիր ներկայացնել, արհամարհական վերաբերմունք է դրսևորում իշխանության հանդեպ:

Քննարկվող հանցակազմի կապակցությամբ Օրենսգրքի և նախկին քրեական օրենսգրքի կարգավորումները հիմնականում նույնն են.

Նախկին քրեական օրենսգրքում նախատեսված էր՝ հայտարարագիրը չարամտորեն չներկայացնելը, ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելը կամ դրանք թաքցնելը:

Եթե նախկին օրենսգրքի 345[1] հոդվածի 2-րդ մասում խոշոր չափ էր համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը (500 հազար ՀՀ դրամը) գերազանցող գումարը (արժեքը), ապա ներկայումս, ինչպես վերը նշվեց, խոշոր չափ է՝ 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը): Ինչ վերաբերում է խոշոր չափի նվազագույն սահմանին, ապա Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետում սահմանված է, որ մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը): Նշվածից բխում է, որ խոշոր չափը կազմում է 500.000 ՀՀ դրամը գերազան-

ցող, սակայն 5 միլիոն ՀՀ դրամը չգերազանցող գումարը (արժեքը):

Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ նախկին քրեական օրենսգրքի ձևակերպումներն, ըստ էության, համահունչ են նոր կարգավորումներին:

Հարկ է նշել նաև, որ քննարկվող արարքը՝ մանր չափի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության հանգեցնելու դեպքում, առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 204.2 հոդվածով:

GEVORG V. ISRAYELYAN
Candidate of Legal Sciences, Associate Professor,
Advisor to the Rector of the Academy of Justice of Armenia,
Lecturer at Eurasia International University

CRIMES CONNECTED WITH COMPULSORY ENFORCEMENT OF JUDICIAL ACTS UNDER THE NEW CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA
(SCIENTIFIC-PRACTICAL COMMENTARIES)

ИСРАЕЛЯН ГЕВОРГ ВОВАЕВИЧ
кандидат юридических наук, доцент,
советник ректора Академии юстиции Армении,
предодаватель Международного университета Евразия

ПРЕСТУПЛЕНИЯ, СВЯЗАННЫЕ С ПРИНУДИТЕЛЬНЫМ ИСПОЛНЕНИЕМ СУДЕБНЫХ АКТОВ, ПО НОВОМУ УГОЛОВНОМУ КОДЕКСУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
(НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ КОММЕНТАРИЙ)

ACADEMY OF JUSTICE / АКАДЕМИЯ ЮСТИЦИИ
YEREVAN / ЕРЕВАН
2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ ՎՈՎԱՅԻ
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Արդարադատության ակադեմիայի ռեկտորի խորհրդական,
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ

(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Վերստուգող սրբագրիչ՝ **Ա. Մկրտիչյան**
Կազմի ձևավորում՝ **Ք. Կարապետյան**